«ՕԳՆԻ՛Ր ԿԱՐԴԱԼ»

ՁԵԿՈՒՅՑ

2022/2023

NorArar
Education NGO

Ծրագրի նպատակը

«Օգնի՛ր կարդալ» ծրագրի նպատակն է զարգացնել գործընկեր դպրոցներից ներգրավված ուսումնական գծով անձնակազմի և Վանաձորի ու Ալավերդու ՏՄԱԿ-ների կարողունակությունները փոխադարձ համագործակցության ու ընթերցանության ներառող դասավանդման միջոցով, որի կենտրոնում կարդալու դժվարություններ ունեցող աշակերտների ընթերցելու հմտությունների զարգացումն է: Ծրագիրն իրականացվումէ Հանրապետական հոգեբանա-մանկավարժական կենտրոնի (ՀՄԿ) հետ անմիջական համագործակցության հիման վրա, որում անմիջականորեն ներգրավված են նաև տարածքային մանկավարժական աջակցության կենտրոնները (ՏՄԱԿ):

Ծրագիրը ֆինանսավորվել է «Հովնանյան ընտանեկան» հիմնադրամի և անհատ բարերարների աջակցությամբ:

«Օգնի՛ր կարդալ» ծրագրի իրականացման փուլը ներառում է 2022 թվականի դեկտեմբերից մինչև 2023-ի սեպտեմբերը:

Շահառու խումբ

Ծրագիրն իրականացվել է Լոռու մարզում տեղակայված 10 հիմնական և միջնակարգ դպրոցներում, որոնք տեղակայված են գյուղական և քաղաքային բնակավայրերում: Ծրագրի շահառուներն են հետևյալ խմբերը.

- Ուսումնական գծով անձնակազմ,
- Ընթերցանության դժվարություն ունեցող աշակերտներ,
- Կրթական հատուկ կարիքներ ունեցող աշակերտներ,
- ՏՄԱԿ-ների անձնակազմ:

Ծրագրի փուլերը

Ծրագիրն ներառել է հետեւյալ փուլերը.

- ✓ Վերապատրաստումներ,
- ✓ Դիտարկման և գնահատման գործիքակազմի ստեղծում,
- ✓ Աշակերտների դիտարկում և կարիքների գնահատում,
- ✓ Տվյալների ամփոփում և միջամտությունների պլանի տրամադրում,
- ✓ Միջամտությունների կիրառում,
- ✓ Մենթորական աջակցություն,
- ✓ Աշակերտների ընթերանցանության հմտությունների վերջնական գնահատում:

Յուրաքանչյուր փուլի գործողությունները մանրամասն ներկայացված են ստորև:

1. Վերապատրաստումներ

Դպրոցների ուսումնական անձնակազմի և ՏՄԱԿ—ներիվերապատրաստումներն ունեցել են դեմ առ դեմ և առցանցձևաչափ: Իսկ վերապատրաստման բովանդակությունը ներառել է թե՛ տեսական, թե՛ գործնական բաղադրիչներ:

2. Աշակերտների դիտարկման եւ ընթերցանության գնահատման գործիքակազմի ստեղծում

Այս փուլի նպատակն է գնահատել ծրագրում ընդգրկված աշակերտներիընթերցանության կարիքը՝հասկանալով, որտեղ է դժվարանում, առաջարկելերեխայի հետ աշխատելու անհատական/խմբային միջամտությունների մեթոդաբանություն՝ միտված բարելավելու ընթերցանությանհմտությունը:

3. Դիտարկման եւ գնահատման այցեր

Դիտարկման և գնահատման այցերի ժամանակ վեր են հանվել աշակերտների ընթերցանության կարիքները՝ հավաքագրելով տվյալներ աշակերտների մասին:

4. Գնահատման տվյալներիամփոփում եւ միջամտությունների պլանի տրամադրում

Այս փուլի ընթացքում ամփոփվեցաշակերտների գնահատման թեստերի արդյունքները, աշակերտները խմբավորվեցին անհատական, փոքր խմբային և ընդհանուր դասարանային աջակցության խմբերում: Դպրոցների ուսումնական անձնակազմին տրամադրվեց միջամտության պլան՝ ըստ խմբավորման:

5. Միջամտությունների կիրառում

8 շաբաթ ուսուցիչները, ուսուցչի օգնականները աշխատել են աշակերտների հետ՝ առաջնորդվելով միջամտության պլանի ձեւաչափով:



6. Մենթորական աջակցություն

Երկու շաբաթը մեկ անգամ զում հանդիպումներուսուցիչների ուսուցչի օգնականների, տնօրենների,փոխտնօրենների հետ քննարկելու միջամտությունների կիրառման ընթացքը

Այս փուլի ընթացքում քննարկվել է հաջորդող 2 շաբաթներ ընթացքում պլանավորվող աշխատանքը աշակերտների հետ:

7.Վերջնական գնահատում

Վերջնական գնահատման ժամանակ օգտագործվել են ընթերցանության գնահատմանթեստերը պարզելու, թե ինչ փոփոխություններ են արձանագրվել աշակերտների ընթերցանության հմտություններում 8 շաբաթվա ընթացքում տրամադրված միջամտության արդյունքում:

Ծրագրի արդյունքները



«Օգնի՛ր կարդալ» ծրագրում ներգրավված է եղել 98 աշակերտ 10 դպրոցից: Ընդ որում՝ 30 աղջիկներից 25-ի մոտ արձանագրվել է ընթերցանության հմտության բարելավում: Ծրագրում ներգրավված 68 տղաներից 59-ի մոտ բարելավելել են ընթերցանության հմտությունները:

Ծրագրի արդյունքները



Ծրագիրն ընդհանուր առմամբ արդյունավետ է եղել 98 աշակերտից 84 աշակերտի ընթերցանության հմտությունների բարելավման համար, որեւէ դրական տեղաշարժ չի արձանագրվել 14 աշակերտի պարագայում:

Ծրագրի արդյունքները



8 շաբաթների միջամտության արդյունքում աշակերտների մոտ արձանագրվել են փոփոխություններ աշակերտների ընթերցանության հմտության տարբեր ենթաբաղադրիչներում: Ընդ որում՝ որոշ աշակերտների մոտ բարելավել են բոլոր հմտությունները միաժամանակ, մյուսների մոտ միան 1 կամ մի քանի ենթաբաղադրիչն են բարելավվել:

Ծրագրի արդյունքները

Գյուղական եւ քաղաքային դպրոցների միջինացված տվյալները՝ ըստ ընթերցանության ենթաբաղադրիչների



Աշակերտների ընթերցանության ենթաբաղադրիչները բարելավվել են թե՛ գյուղական, թե՛ քաղաքային մեծ ու փոքր դպրոցներում: Սակայն այս դպրոցների ընթերցանության ենթաբաղադրիչների զարգացման միջեւ առկա է որոշակի տոկոսային տարբերություն:

Եզրակացություններ. ազդեցություն

Ըստ ծրագրին մասնակցող ուսումնական գծով անձնակազմի՝ ծրագրի մասնակցության շնորհիվ բարձրացել է դասավանդող անձնակազմի մոտիվացիան: Անձնակազմը ձեռք է բերել ընթերցանության հմտության զարգացման մեթոդական բազա , որը սկսել է կիրառել նաեւ ստեղծագործաբար՝փոփոխելով եւ հարմարեցնելով իրենց դասարանի կարիքներին: Բարձրացել է դասավանդող անձնակազմի իրազեկությունն ընթերցանության տարբեր բաղադրիչների շուրջ աշխատելու անհրաժեշտության մասին:

Եզրակացություններ. դժվարություն

Ուսումնական անձնակազմի տեսանկյունից՝ծրագրի ընթացքումիրենց ունեցած դժվարությունները կապված են եղել ժամանակի սղության հետ,որիպատճառով դժվար է եղել համատեղել առարկայական չափորոշչի պահանջները, առարկայական ծրագրային բովանդակության ուսուցումը և աշխատանքը միտված չեզոքացնելու աշակերտների ընթերցանության բացթողումները:

Եզրակացություններ. առաջարկներ

Դպրոցների ուսումնական անձնակազմի հետ հարցազրույցների ժամանակ հնչել են առաջարկներ բարելավել ծրագիրը՝ տրամադրելով տարբերակված առաջադրանքներ և հավելյալ ռեսուրսների միջամտությանփուլում օգտագործելու համար: Ռեսուրսների հնարավոր տարբերակներ դիտարկել տեսանյութերը, պատրաստի օգտագործման նյութերը/քարտերը, խաղերը: Աջակցել դպրոցներին ծնողների ներգրավման հարցում: Դպրոցների անձնակազմին ընձեռել հնարավորություն կիսվելու միջդպրոցական մակարդակում: